

Աշխատանքային հերթական այց Վարդենիսի տարածքում

29.04.2015

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն ապրիլի 28-ին աշխատանքային այցով եղավ Վարդենիսի տարածքում: Վարդենիսի քաղաքապետարանում մարզի ղեկավարը հանդիպում ունեցավ Վարդենիս քաղաքային համայնքի, տարածքի Մաքենիս, Ազատ, Լճավան, Ձորավանք, Ջաղացաձոր, Ակունք գյուղական համայնքների ղեկավարների հետ, որի ընթացքում քննարկվեցին համայնքներում առկա սոցիալ-տնտեսական մի շարք հիմնախնդիրներ: Մարզպետը անդրադարձավ համայնքներում գործավարական փաստաթղթերում նկատված բացթողումներին և հորդորեց դրանք շտկել սեղմ ժամկետում: Ռաֆիկ Գրիգորյանը համայնքների ղեկավարներին առաջարկեց համայնքներում ՏԻՄ ընտրությունների հետ կապված նախապատրաստական աշխատանքները կազմակերպել օրենքով սահմանված կարգով: Այնուհետև Ռաֆիկ Գրիգորյանը դիտարկեց ՄԱԿ-ի նախաձեռնությամբ և ԵՄ ֆինանսավորմամբ Ծովակ համայնքում 18 հա տարածքի վրա կազմակերպված ծառատունկի ընթացքը, Ծովակ համայնքի ամբուլատորիայում ծանոթացավ բուժսպասարկման հետ կապված խնդիրներին, իսկ նույն համայնքի միջնակարգ դպրոցում՝ վերանորոգման կարիք ունեցող հանդիսությունների սրահի և մարզադահլիճի շենքային պայմաններին: